# ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ, ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՈՒ ԹԵՄԱԿԱՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻՆ (*ՍՏԱՄԲՈՒԼ*),

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆԻՆ (*ԵՐՈՒՍԱՂԵՄ*).

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՉԱՊԱՀՅԱՆԻՆ (*ԲԵՅԹ-ՄԵՐԻ*),

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (*ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ*),

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԻՆ (*ՆՅՈՒ-ՅՈՐՔ*),

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆԻՆ (*ԿԱՀԻՐԵ*),

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ (*ՖՐԵԶՆՈ*),

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (*ՓԱՐԻԶ*),

ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՅԱՆԻՆ (*ԼՈՆԴՈՆ*)։

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Այսօր Զատիկ է, սիրելի՛ք մեր, և հարուցյալ Փրկչի Իջման Ս. Սեղանեն, ամենայն հայոց Մայր Տաճարի զանգակները վերստին ցնծագին կղողանջեն և դեպի բոլոր հորիզոնները բոլորիդ կբերեն ավետիսը խաչյալ և թաղյալ Քրիստոսի հրաշափառ հարության:

Շնորհաբաշխ այս ավետիսով կշնորհավորենք զՁեզ, խորհուրդդ, թեմիդ հոգևոր դասը, ազգային, եկեղեցական, մշակութային և բարեսիրական բոլոր կազմակերպությունները և համայն հավատացյալ և սիրեցյալ ժողովուրդը, մաղթելով, որ Տերը բոլորիդ պարգևե քաջառողջություն, արևշատություն և գործոց հաջողություն:

Բարի Զատիկ Ձեզ բոլորիդ, հարազատներ մեր: Բոլորիդ սրտերուն մեջ թող ծագի և խայտա սուրբ հարության ուրախությունը և թող շատնա լույսը Ձեր հոգիներուն, Ձեր օրերուն, Ձեր կյանքի ճանապարհին և Ձեր ձեռաց գործերուն, միշտ հաստատ մեր նախնյաց սուրբ հավատքին մեջ, միշտ սիրով և միաբան խաղաղությամբ, միշտ հավատարիմ Մայր Եկեղեցիին, Մայր Աթոռին և Մայր Հողին:

«Շնորհք և զօրութիւն ամենասուրբ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ և միշտ, ամէն»:

Հայրապետական օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՋԳՈՆ Ծ. ՎՐԴ.
ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆԻՆ (*ԲԱՂԴԱԴ*),
ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԻՍԱՀԱԿ ՎՐԴ. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ (*ԱԹԵՆՔ*),
ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ
ԱՌԱՋՆՈՐԴ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ Ծ. ՎՐԴ.
ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆԻՆ (*ՌՈՍՏՈՎ*),
ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ. ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ
(*ԼԵՆԻՆԱԿԱՆ*),
ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԵՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ
ՏԵՂԱՊԱՀ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՏԻՐԱՅՐ ՎՐԴ.
ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ (*ԲԱՔՈՒ*),
ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ ՀՈԳԵՇՆՈՐՀ
Տ. ԵՂԻՇԵ Ծ. ՎՐԴ. ՈՒԹՈՒՃՅԱՆԻՆ (*ՎԻԵՆՆԱ*),
ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՀՈՎԻՎ ՀՈԳԵՇՆՈՐՀ
Տ. ՊԱՐԳԵՎ ՎՐԴ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ (*ՄՈՍԿՎԱ*),
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ
ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ (*ԹԱՎՐԻԶ*),
ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ԹԵՀՐԱՆ*),
ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ՍՊԱՀԱՆ*),
ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ԲՈՒԽԱՐԵՍՏ*),
ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ՍՈՖԻԱ*),
ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ԿԱԼԿԱԹԱ*),
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ՄԱՆՉԵՍՏՐ*),
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ՍՈՒՐԱԲԱՅԱ*),
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ՄԻԼԱՆ*),
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ՍԻԴՆԵՅ*),
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ԱԴԴԻՍ-ԱԲԵԲԱ*),
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ԽԱՐԹՈՒՄ*),
Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ԵՐԵՎԱՆ*),
Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ԵՐԵՎԱՆ*),
Ս. ԶՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ (*ԵՐԵՎԱՆ*):

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Այսօր Զատիկ է, սիրելի՛ք մեր, և հարուցյալ Փրկչի Իջման Ս. Սեղանեն, ամենայն հայոց Մայր Տաճարի զանգակները վերստին ցնծագին կղողանջեն և դեպի բոլոր հորիզոնները բոլորին կբերեն ավետիսը խաչյալ և թաղյալ Քրիստոսի հրաշափառ հարության:

Շնորհաբաշխ այս ավետիսով կշնորհավորենք զՁեզ, խորհուրդդ, թեմիդ հոգևոր դասը, ազգային, եկեղեցական, մշակութային և բարեսիրական բոլոր կազմակերպությունները և համայն հավատացյալ և սիրեցյալ ժողովուրդը, մաղթելով, որ Տերը բոլորին պարգևե խաղաղություն, արևշատություն և գործոց հաջողություն:

Բարի Զատիկ Ձեզ բոլորիդ, հարազատներ մեր: Բոլորիդ սրտերուն մեջ թող ծագի և խայտա սուրբ հարության ուրախությունը և թող շատնա լույսը Ձեր հոգիներում, Ձեր օրերում, Ձեր կյանքի ճանապարհին և Ձեր ձեռաց գոր-

ծերում, միշտ հաստատ մեր նախնյաց սուրբ հավատքին մեջ, միշտ սիրով և միաբան խաղաղությամբ. միշտ հավատարիմ Մայր Եկեղեցիին, Մայր Աթոռին և Մայր Հողին:

«Շնորհք և զորութիւն ամենասուրբ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ և միշտ, ամէն»:

Հայրապետական օրհնությամբ՝

**ՎԱԶԳԵՆ Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## Ս. ՂԱԶԱՐԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՀԱՅՐ ՈՒԼՈՒՀՈՃՅԱՆԻՆ (ՎԵՆԵՏԻԿ), ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՀԱՅՐ ՀԱՊՈՋՅԱՆԻՆ (ՎԻԵՆՆԱ)։

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Հարուցյալ Փրկչի Իջման տեղեն, ամենայն հայոց Մայր Տաճարի զանգակները ցնծագին կղողանջեն, Ձեզ բերելով ավետիսը խաչյալ և թաղյալ Քրիստոսի հրաշափառ հարության:

Շնորհավորելով Ձերդ Գերապայծառությունը և Ուխտիդ միաբանությունը, կմաղթենք, որ հոգվո ուրախությամբ և խաղաղությամբ տոնեք Ս. Զատիկը, փառք տալով մարդասեր Տիրոջ և Փրկչին մեր, «որ մահուամբ զմահ կոխեաց և յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգևեաց»:

Մնամք աղոթող առ Աստված վասն Ձեր քաջառողջության և Ձեր սուրբ և ազգանվեր գործոց հաջողության:

Հայրապետական օրհնությամբ՝

**ՎԱԶԳԵՆ Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

## ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻՆ ԵՎ ԾԱՆՈԹ ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻՆ

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

Այսօր Զատիկ է, սիրելի՛ք Մեր, և հարուցյալ Փրկչի Իջման Ս. Սեղանեն, ամենայն հայոց Մայր Տաճարի զանգակները վերստին ցնծագին կղողանջեն և դեպի բոլոր հորիզոնները բոլորիդ կբերեն ավետիսը խաչյալ և թաղյալ Քրիստոսի հրաշափառ հարության:

Շնորհաբաշխ այս ավետիսով կշնորհավորենք զՁեզ, մաղթելով, որ Տերը պարգևե Ձեզ և Ձեր բոլոր հարազատներուն քաջառողջ երկար տարիներ ու յիակատար հաջողություն Ձեր եկեղեցաշեն ու ազգանվեր աշխատանքներուն:

Բարի Զատիկ Ձեզ, հարազատներ, բարեկամներ Մեր: Ձեր ընտանյաց ջերմիկ հարկերուն տակ, Ձեր սրտերուն մեջ թող ծագի ու խայտա Ս. Հարության ուրախությունը և թող շատնա լույսը Ձեր հոգիներուն, Ձեր կյանքին և Ձեր ձեռաց բարի գործերուն, միշտ հաստատ մեր նախնյաց լույս հավատքի վեմին վրա, միշտ հավատարիմ Մայր Եկեղեցիին, Մայր Աթոռին և Մայր Հողին:

«Շնորհք և զորութիւն ամենակեցոյց յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ և միշտ, ամէն»:

Հայրապետական օրհնությամբ՝

**ՎԱԶԳԵՆ Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

Ս. Զատկի առիթով ընդունեցէք մեր, պաշտոնական մարմիններուն և ժողովրդին փոխադարձ շնորհավորանքը և սրտագին մաղթանքները Վեհափառությանդ քաջառողջության, արևշատության և ձեռնարկներու հաջողության համար, ի պայծառություն Հայ Եկեղեցվո և Մայր Աթոռի:

ԹՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ

**ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ**

ՍՏԱՄԲՈՒԼ

---

Ձերդ Ս. Օծության ներշնչող շնորհավորանքը ուրախությամբ ստացանք: Կխնդրենք ընդունիլ մեր և միաբանությանս և ժողովրդի ամենաջերմ սիրո և որդիական հավատարմության հավաստին: Փառաց Տերը հաղթանակով և հույսով թող պսակե Վեհափառությանդ գործերը Իր հարության շնորհիվ և պայծառացնե Մայր Աթոռը:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ

**ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ**

ԵՐՈՒՍԱՂԵՄ

---

Ս. Զատկի առթիվ ընդունեցեք, հանուն Կիլիկիո միաբանության, մեր սրտագին աղոթքները Ձեր թանկագին կյանքի արևշատության և Մայր Աթոռի բարօրության համար:

**ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ**

ԲԵՅՐՈՒԹ

---

Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնին առթիվ Հարավային Ամերիկայի թեմի համայն ժողովրդյան և մեր կողմե կուզանք շնորհավորել Ձերդ Վեհափառությունը և մաղթել Ձեզի երկար կյանք և Մայր Աթոռին ու Հայաստանյայց Եկեղեցիին բարեզարդություն և պայծառություն:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

**ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍ

---

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ս. Զատկի առթիվ Ձերդ Վեհափառության կբերենք մեր հոգևոր դասուն, թեմական խորհրդի ներակա մարմիններուն և համայն ժողովրդին սրտագին շնորհավորությունն ու որդիական սերը, Ձերդ Ս. Օծության մաղթելով քաջառողջություն, արևշատություն:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

**ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ**

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

---

Ս. Զատկվա առթիվ մեր և եգիպտահայերու անունով Ձերդ Վեհափառության կներկայացնենք մեր հարգալից շնորհավորությունները և անկեղծ մաղթանքները Մայր Աթոռի պայծառության համար:

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

**ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆ,**

ԿԱՀԻՐԵ

---

ի համբույր Ս. Աջույդ Զատկի շնորհավորություն:

Ընդունեցեք պաշտոնական մարմիններու և ամբողջ ժողովրդի սրտագին մաղթանքները Վեհափառությանդ արևշատության և Մայր Աթոռի պայծառության համար:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ
ԿԱԼԻՖՈՐՆԻՈ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ՎԱՐԴԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՖՐԵԶՆՈ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

---

Հանուն հոգևորական դասուն, վարչական խորհրդին և եկեղեցվո հավատացյալներուն, Ս. Զատկվա տոնին առթիվ կներկայացնենք Ձերդ Վեհափառության ջերմագին շնորհավորություններ, հարգալից մեծարանքներ, մաղթելով Ձեզ քաջառողջություն և Առաքելական Մայր Եկեղեցվույն՝ բարգավաճում:

**Արևմտյան Եվրոպայի հայոց**
**Հայրապետական պատվիրակ**
ՍԵՐՈՎԲԵ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓԱՐԻԶ

---

Ս. Զատկի տոնին առթիվ հաճեցեք ընդունել մեր և մեր համայնքին շնորհավորություններն ու լավագույն մաղթանքները Ձեր արևշատության համար: Կաղոթենք Ս. Էջմիածնի պայծառության և Հայաստանյայց Եկեղեցվո միասնականության համար:

**Անգլիո հայոց**
**Հայրապետական պատվիրակ**
ՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՅԱՆ

ԼՈՆԴՈՆ

---

«Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Աստվածային Փրկչին հրաշափառ հարության հաղթական ալելուիաները անպատում ուրախությամբ կհամակեն բոլորիս սրտերը, վասնզի այն է մեր սուրբ հավատքին ամուր խարիսխը և անճառելի օրինակը:

Աղոթող ենք, որ Քրիստոսի հարության լույսով պայծառանա ու վերանորոգվի բովանդակ մարդկությունը՝ ճշմարիտ բարօրության և երջանկության հովիտին մեջ, և ոռոգվի միշտ կենսատու և ականակիտ ջուրերով աստվածային պարգևներուն:

Այդ զգացումներով, խորին հարգանոք, ի բացակայության մեր գերապայծառ Աբբահոր, կուզենք հանուն բովանդակ միաբանությանս ներկայացնելու մեր փոխադարձ ջերմ մաղթանքները Ձերդ Վեհափառության, առողջության և արդյունաշատ գործունեության բյուր իղձերով:

**Ընդհանուր աթոռակալ**
**Մխիթարյան միաբանության**
ՀԱՅՐ ՔԵՐՈՎԲԵ Ա. ՋՐԱՔՅԱՆ

ՎԵՆԵՏԻԿ, Ս. ՂԱԶԱՐ

---

Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ ընդունեցեք մեր և թեմի ժողովրդի սրտագին շնորհավորությունները:

**Իրաքի հայոց առաջնորդ**
ԶԳՈՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ԲԱՂԴԱԴ

---

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ջերմագին շնորհավորություններ հանուն հունահայ թեմի բոլոր մարմիններուն և ժողովրդյան:

**Հունաստանի հայոց առաջնորդական տեղապահ**
ԻՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱԹԵՆՔ

---

Թեմական և եկեղեցական խորհուրդները, քահանայից դասը, համայն հավատացյալները և ես անձամբ շնորհավորում ենք Ձերդ Ս. Օծությանը Փրկչի Ս. Հարության տոնի առթիվ: Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, բազում տարիների երջանիկ կյանք, հովվապետական բեղմնավոր գործունեություն ի փառս Եկեղեցու, հայ ժողովրդի և Հայրենիքի:

**Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի**
**հայոց առաջնորդ**
ԳԱՐԵԳԻՆ Ծ. ՎՐԴ. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ՌՈՍՏՈՎ

---

«Արդարև յարեաւ Քրիստոս ի մեռելոց»:

Բերկրանքով կարդացինք Շիրակի ժողովրդին ուղղված Ձերդ Վեհափառության զատկական բարեմաղթությունները: Բոլորս ի սրտե աղոթեցինք Ձեր արևշատության, Մայր Աթոռի պայծառության և աշխարհի խաղաղության համար:

Ընդունեցեք մեր որդիական սերը:

**Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ**
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆ

---

Հանուն վրահայ բարեպաշտ և հայրենասեր ժողովրդի և քահանայից դասու, որդիական ջերմ սիրով շնորհավորում ենք Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության տոնը: Աղոթում ենք Աստուծուն Ձերդ Վեհափառության թանկագին կյանքի արևշատության համար: Բարձրյալն Աստված անսասան պահի մեր Ս. Եկեղեցին և նրա արժանընտիր, աստվածապարգև Գահակալին, ի պարծանս ազգիս հայոց և մեր վերածնված Մայր Հայրենիքի:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Հայցելով Ձերդ Վեհափառության օրհնությունը թեմիս հավատացյալների և մեր վրա, մատչիմք ի համբույր Ս. Աջույդ, խոնարհ որդի՝

**Վրաստանի հայոց առաջնորդական տեղապահ**
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻ

---

Ադրբեջանի և Թուրքեստանի հայոց թեմական և եկեղեցական խորհուրդները, համայն հավատացյալ ժողովուրդը, հոգևոր դասը և ես անձամբ շնորհավորում ենք Ձերդ Վեհափառությանը Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առթիվ: Մաղթում ենք Ձեզ արևշատություն՝ ի բարօրություն մեր Եկեղեցու և ժողովրդի:

**Ադրբեջանի և Թուրքեստանի հայոց**
**առաջնորդական տեղապահ**
ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՐՏԻԿՅԱՆ

ԲԱՔՈՒ

---

Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ ընդունեցեք անձամբ իմ, եկեղեցական խորհրդի և հավատացյալների ջերմագին բարեմաղթությունները՝ Ձերդ Ս. Օծության քաջառողջության և բարօրության համար, որպեսզի կարողանաք կատարել Ձեր ուսերին դրված ծանր պարտականությունը՝ ի փառս եկեղեցու և ժողովրդի:

**Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ**
ՊԱՐԳԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄՈՍԿՎԱ

---

Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ ընդունեցեք թեմական ժողովի, թեմական խորհրդի, իմ և քահանայից դասու, դպրոցի հոգաբարձության, ուսանողական կազմի և հավատացյալ ժողովրդի շնորհավորությունը որդիական հարգանոք, ի համբույր Ս. Աջույդ: Մաղթում ենք, որ հարուցյալ Փրկիչը պարգևի Ձեզ երկար և բարեբաստիկ կյանք ու բեղմնավոր գործունեություն, ի փառս մեր Առաքելական Ս. Եկեղեցու:

**Ատրպատականի հայոց առաջնորդական տեղապահ**
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԹԱՎՐԻԶ

---

Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ ընդունեցեք ռումանահայ հավատացյալ ժողովրդի և մեր ջերմագին շնորհավորությունները: Կմաղթենք ի սրտե քաջառողջ երկար կյանք, հօգուտ և ի փառս Հայաստանյայց Ս. Եկեղեցվո:

ՀԱՅՐԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

---

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ընդունեցեք որդիական ջերմ շնորհավորություններ:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՍՈՖԻԱ

---

Որդիական խորին հարգանքներով շնորհավորում ենք Ձերդ Վեհափառության Ս. Փրկչի Հարության հրաշափառ տոնը:

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԹԵՀՐԱՆ

---

Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ ներկայացնում ենք ջերմագին շնորհավորություն և սրտագին մաղթանքներ Վեհափառությանդ քաջառողջության և արևշատության համար:

ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՍՊԱՀԱՆ

---

Եկեղեցու խորհրդի և մեր գաղութի կողմից հղում ենք Ձերդ Վեհափառության և Գերագույն Հոգևոր Խորհրդին զատկական սրտագին շնորհավորություններ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՔԱԼԿԱԹԱ

---

Շնորհակալություն Ձերդ Վեհափառության օրհնությանց և բարեմաղթությանց համար:

Գաղութս որդիական սիրով կշնորհավորե Ս. Զատիկը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲՈՄԲԵՅ

---

Քրիստոսի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ խնդրում ենք ընդունել մեր որդիական բարեմաղթությունները Ձեր կյանքի երջանիկ տարիների համար և արժանացնել մեզ Ձեր հայրական օրհնության:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԴԱՍ և ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆ

---

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Մեր Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ շնորհավորում ենք Ձեզ և մաղթում երկար կյանք և քաջառողջություն:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԴԱՍ և ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆ

---

Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ շնորհավորում ենք Ձերդ Ս. Օծությանը և հայտնում մեր բարեմաղթությունները Ձեր կյանքի արևշատության, Հայաստանյայց Եկեղեցու անսասանության և Մայր Հայրենիքի բարգավաճման ու բարօրության համար:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԶՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԴԱՍ և ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՐԵՎԱՆ

---

Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ, Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ուրիշ բազմաթիվ շնորհավորական նամակներ ազգային պաշտոնական մարմիններից, կազմակերպություններից, Մայր Աթոռի բարերարներից և եկեղեցական ու աշխարհական ազգային ծանոթ դեմքերից՝ Նորին Ս. Օծության կյանքի արևշատության և Մայր Աթոռի պայծառության սրտագին բարեմաղթություններով: